Armenian student edition

# Անգլերեն Քերականության Հիմնական Գիտելիքներ Սկսնակների Համար

Ոչ-Քրեդիտ ESL
Գլենդել Քոմյունիթի Քոլեջ
Հայերեն Հրատարակություն
Ուսանողների Համար

Պատրաստողներ: Edwin Fallahi, Rocio Fernandez, Glenda Gartman, Robert Mott, and Deborah Robiglio

Հեղինակ: Deborah Robiglio

Շնորհակալություններ:Այս գրքույկի պատրաստողները ցանկանում են հայտնել իրենց շնորհակալությունը Ոչ–Քրեդիտ ESL ուսանողներին որոնք ոգևորեցին այս գրքույկի պատրաստմանը:Նաև խորին շնորհակալություններ Dr. Karen Ferkich-Holden,Helen Merriman,Jane DiLucchio,Mary Stone, Anahit Kusheryan և բոլոր Ուսման և Գիտելիքների Շարունակման Կրթակենտրոնի Աշխատակազմին, որոնք տարբեր ձևերով քաջալերեցին մեզ և հատկացրին այն ինչ անհրաժեշտ էր այս գրքույկը պատրաստելու համար:

Նկարները պատրաստել են: JUPITERIMAGES and Microsoft Clip Art Gallery

Գեղարվեստական ձևավորումը: Nola Lunstedt

© 2006 by Glendale Community College

Տեղեկություն ուսանողներին:Այս գրքույկը ձեզ կօգնի Անգլերեն սովորել:Այն լի է կանոննրեով և օրինակներով,որոնք ձեր Անգլերենի ուսուցիչները ընտրել են որպես հիմք ձեր Անգլերենի ուսման համար:Ձեզ օգնելու համար այդ կանոնները թարգմանված են Հայերենով:Բայց դա միայն սկզբնական գործիք է և ինչպէս ամեն մի գործիք պետք է հաճախ օգտագործվի արդյունավետ լինելու համար:Այս գրքույկը միայն մի սկզբնական աղբյուր է,հետագայում կարք կունենաք լրացուցիչ գրքերի:Երկրորդ լեզվի ուսուցումը բարդ պրոցես է:Հետագայում դուք կսովորեք շատ ավելի օրենքներ և բացառություներ,որոնք այս գրքույկում բացահայտված չեն:

Համենայն դեպըս օգտագործեք այս գրքույկը հաճույքով և վստա եղեք որ ապա ունեք մի կարեվոր գործիք Անգլերեն լեզուն սովորելու համար:

# Table of Contents
## Ցանկ


English Alphabet — 1
Անգլերենի Այբուբենը

Subject Pronouns — 2
Անձնական Դերանուններ

Be (am, is, are) — 3
Լինել Բայը

Articles — 10
Հոդեր

Singular Nouns and Plural Nouns — 11
Եզակի և Հոգնակի Գոյականներ

There is/There are — 12
Կա Կան

Demonstratives (this, that, these, those) — 13
Ցուցականներ

Possessive Adjectives and Possessive Pronouns — 15
Ստացական Ածականներ և Դերանուններ

Simple Present — 17
Ներկա Ժամանակ

Present Continuous — 21
Շարունակական Ներկա Ժամանակ

Prepositions — 25
Նախդիրներ

Imperatives — 27
Հրամայականներ

Question Words — 28
Հարցական Բառեր

Be (was, were) — 29
Լինել (անցյալ ժամանակում)

Parts of Speech — 30
Խոսքի Մասեր

# English Alphabet *(Անգլերենի Այբուբենը)*




Տառերը ներկայացնում են ավելի քան 40 հնչյուններ:

**Vowels(Ձայնավոր հնչյուններ):** a e i o u և երբեմն y.

**Consonants(Բաղաձայն հնչյուններ):** b c d f g h j k l m n p q r s t v w x y z

# Subject Pronouns

*Անձնական Դերանուններ*

Անձնական դերանունները գործածվում են գոյական անունի փոխարեն:

⚐ Հայերենում նույնպես գոյություն ունեն անձնական դերանուններ:

| Անգլերեն | | Հայերեն |
|---|---|---|
| I |  | Ես |
| You |  | Դու/Դուք<br>(եզակի, հոգնակի,պաշտոնական) |
| He |  | Նա<br>(արական) |
| She |  | Նա<br>(իգական) |
| It |   | Սա,Դա<br>Առարկա, կենդանի<br>(չեզոք) |
| We |  | Մենք |
| They |  | Նրանք |

# Be (am, is, are)

*Լինել*

Be (am, is, are) (լինել) բայը օգտագործվում է ինքնություն կամ տեղ արտահայտելու համար (տե՛ս էջ 8 ավելի շատ տեղեկության համար: Ներկա ժամանակում Be (am,is,are) (լինել) բայը ունի երեք տարբեր տեսակներ՝ am, is, are:

⚐ Հայերենում նաև "Լինել" բայը խոնարհվում է ըստ ենթակայի:

## Positive (Դրական)

| | |
|---|---|
| I **am** → Ես եմ | We **are** → Մենք ենք |
| You **are** → Դու ես | You **are** → Դուք եք (հոգնակի) |
| He **is** → Նա է (արական)<br>She **is** → Նա է (իգական)<br>It **is** → Սա է , Դա է (չեզոք) | They **are** → Նրանք են |





**Example:** I **am** happy.
Ես ուրախ եմ:

They **are** happy.
Նրանք ուրախ են:

## Contractions

*Կրճատումներ*

Կարճ ձևը գրելու համար օգտագործվում է հապավման նշանը ( ′ ) դերանունի և Be (am,is,are) ( Լինել) բայի միացման համար:

⚐ Հայերենում գոյություն չունեն այսպիսի կրճատումներ:

| | |
|---|---|
| **I'm** → Ես եմ | **We're** → Մենք ենք |
| **You're** → Դու ես | **You're** → Դուք եք (հոգնակի) |
| **He's** → Նա է<br>**She's** → Նա է<br>**It's** → Սա է , Դա է | **They're** → Նրանք են |





**Examples:** **I'm** happy. Ես ուրախ եմ:

**They're** happy. Նրանք ուրախ են:

# Negative

*Ժխտական*

N*ot*-ը օգտագործվում է be (am, is, are) -ից հետո ժխտական նախադասություններ կազմելու համար:

⚐ Հայերենում “չ” տառը (մասնիկը) ավելացվում է “Լինել” բայի խոնարհված տարբեր ձևերին:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I **am not** | → | Ես չեմ | We **are not** | → | Մենք չենք |
| You **are not** | → | Դու չես | You **are not** | → | Դուք չեք (հոգնակի) |
| He **is not** | → | Նա չէ | They **are not** | → | Նրանք չեն |
| She **is not** | → | Նա չէ | | | |
| It **is not** | → | Սա չէ, Դա չէ | | | |





**Examples:** I **am not** sad.
Ես տխուր չեմ:

They **are not** sad.
Նրանք տխուր չեն:

# Negative Contractions

*Ժխտական կրճատումներ*

Նախ միավորեք անձնական դերանունը և be (am, is, are) (լինել) բայը,գրեք not-ը դրանից հետո:

⚐ Հայերենում գոյություն չունեն այսպիսի կրճատումներ:

| | |
|---|---|
| **I'm not** → Ես չեմ | **We're not** → Մենք չենք |
| You'**re not** → Դու չես | You'**re not** → Դուք չեք (հոգնակի) |
| He'**s not** → Նա չէ<br>She'**s not** → Նա չէ<br>**It's not** → Սա չէ, Դա չէ | They'**re not** → Նրանք չեն |





**Examples:** **I'm not** sad.
Ես տխուր չեմ:

**They're not** sad.
Նրանք տխուր չեն:

## Questions
### *Հարցական*

Հարցական ձևը կազմելու համար տեղավորեք be (am,is,are) (լինել) բայը նախադասության սկիզբում:Նախադասությունը սկսեք մեծատառով և ավելացրեք հարցական նշանը ( ? ) նախադասության վերջում:

⚐Հայերենում, ի տարբերություն անգլերենի, հարցական նախադասության կազմը չի փոխվում, ավելանում է միայն հարցական նշանը " ՞ " հարցում արտահայտող բառի վրա:

They are married. They **are** married. **Are** they married?





**Are** they married?
Նրանք ամուսնացա՞ծ են:

→ Yes, they are married. Այո, նրանք ամուսնացած են:

→ No, they are not married. Ոչ, նրանք ամուսնացած չեն:

| | | | |
|---|---|---|---|
| **Am** I married? → | Ես ամուսնացա՞ծ եմ: | **Are** we married? → | Մենք ամուսնացա՞ծ ենք: |
| **Are** you married? → | Դու ամուսնացա՞ծ ես: | **Are** you married? → | Դուք ամուսնացա՞ծ եք: |
| **Is** he married? → | Նա ամուսնացա՞ծ է: | **Are** they married? → | Նրամք ամուսնացա՞ծ են: |
| **Is** she married? → | Նա ամուսնացա՞ծ է: | | |
| **Is** it a book? → | Սա գի՞րք է:<br>Դա գի՞րք է: | | |

# Uses of the verb be (am, is, are)

## Be (լինել)-բայի տարբեր օգտագործումները:

Be (am, is, are) (լինել) բայը օգտագործվում է տարբեր նպատակների համար:

| | Long Form | Short Form |
|---|---|---|
| • Place of origin<br>Ծագումը | I **am** from Mexico.<br>Ես Մեքսիկոից եմ: | I'**m** from Mexico.<br>Ես Մեքսիկոից եմ: |
| • Age<br>Տարիք | He **is** 25 years old.<br>Նա 25 տարեկան է: | He'**s** 25 years old.<br>Նա 25 տարեկան է: |
| • Weather<br>Եղանակ | It **is** hot.<br>Շոգ է: | It'**s** hot.<br>Շոգ է: |
| • Time<br>Ժամանակ | It **is** 6:00 o'clock.<br>Ժամը 6-ն է: | It'**s** 6:00 o'clock.<br>Ժամը 6-ն է: |
| • Description<br>Նկարագրում | They **are** tall.<br>Նրանք բարձրահասակ են: | They'**re** tall.<br>Նրանք բարձրահասակ են: |
| • Price<br>Գին | It **is** $25.00.<br>25 դոլար է: | It'**s** $25.00.<br>25 դոլար է: |
| • Location<br>Տեղ, վայր | We **are** in class.<br>Մենք դասարանում ենք: | We'**re** in class.<br>Մենք դասարանում ենք: |
| • Occupation<br>Մասնագիտություն | You **are** a teacher.<br>Դու դասատու ես: | You'**re** a teacher.<br>Դու դասատու ես: |

# Be (am, is, are)

*Լինել*

## Positive (Դրական)

| | | | |
|---|---|---|---|
| I **am** → | Ես եմ | We **are** → | Մենք ենք |
| You **are** → | Դու ես | You **are** → | Դուք եք (հոգնակի) |
| He **is** → | Նա է (արական) | They **are** → | Նրանք են |
| She **is** → | Նա է (իգական) | | |
| It **is** → | Սա է , Դա է | | |

## Negative (Ժխտական )

| | | | |
|---|---|---|---|
| I **am not** → | Ես չեմ | We **are not** → | Մենք չենք |
| You **are not** → | Դու չես | You **are not** → | Դուք չեք (հոգնակի) |
| He **is not** → | Նա չէ | They **are not** → | Նրանք չեն |
| She **is not** → | Նա չէ | | |
| It **is not** → | Սա չէ, Դա չէ | | |

## Questions (Հարցական )

| | | | |
|---|---|---|---|
| **Am** I married? → | Ես ամուսնացա՞ծ եմ: | **Are** we married? → | Մենք ամուսնացա՞ծ ենք: |
| **Are** you married? → | Դու ամուսնացա՞ծ ես: | **Are** you married? → | Դուք ամուսնացա՞ծ եք: |
| **Is** he married? → | Նա ամուսնացա՞ծ է: | **Are** they married? → | Նրամք ամուսնացա՞ծ են: |
| **Is** she married? → | Նա ամուսնացա՞ծ է: | | |
| **Is** it a book? → | Սա գի՞րք է:<br>Դա գի՞րք է: | | |

# Articles – a  an

*Հոդեր*

Անգլերենում a/an անորոշ հոդեր են,որոնք օգտագործվում են եզակի,հաշվողական և ոչ հատուկ գոյական անուններից առաջ:Գործածվում է “a” հոդը, եթե բառը սկսվում է բաղաձայնով:Իսկ եթե բառը սկսվում է ձայնավորով, գործածվում է “an” հոդը:

⚐ Հայերենում “մի” անորոշ հոդը օգտագործվում է բաղաձայն և ձայնավոր սկսվող բառերի հետ:

<u>a</u>

**a** student



**a** teacher



**a** classroom



**a** pencil



**a** uniform
/Y/



**a** house



<u>an</u>

**an e**raser



**an a**pple



**an o**ctopus



**an i**guana



**an u**mbrella



**an** hour
~~h~~



# Singular Nouns and Plural Nouns

*Եզակի և Հոգնակի Գոյականներ*

Եզակի թիվ գոյական անունը ներկայացնում է միայն մի գոյական անուն:Իսկ հոգնակի թիվ գոյականը ներկայացնում է երկու կամ ավելի գոյականներ:Ավելացրեք մի “s” որպեսզի եզակի թիվ գոյական անունը փոխեք հոգնակի թիվ գոյական անունի:

Հայերենում "եր" և "ներ" վերջածանցերը օգտագործվում են հոգնակի գոյականներ պատրաստելու համար:

| Singular Nouns (Եզակի թիվ գոյական անուն) | | Plural Nouns (հոգնակի թիվ գոյական անուն) | |
|---|---|---|---|
| desk |  | desks |  |
| book |  | books |  |

## Irregular Plural Nouns Հոգնակի անկանոն գոյականներ

Այս գոյականները բացառություններ են:Նրանց ոչ միայն “s” չի ավելանում ,այլ գրվում են բոլորովին տարբեր ձևով:

| Singular Nouns (Եզակի թիվ գոյական անուն) | | Plural Nouns (հոգնակի թիվ գոյական անուն) | |
|---|---|---|---|
| woman |  | women |  |
| man |  | men |  |
| child |  | children |  |
| person |  | people |  |

# There is/There are

*Կա* *Կան*

There is ( կա ) և there are ( կան ) արտահայտում են այն ինչ որ գոյություն ունի: Օգտագործվում է There is ( կա ) եզակի և there are ( կան ) հոգնակի պարագաների հետ:

⚐ Հայերենում գոյություն ունեն նույն ձևերը:





**<u>There is</u> ( Կա )**

| | | |
|---|---|---|
| **There is** a teacher. | → | Մի դասատու կա: |
| **There is** a chalkboard. | → | Մի գրատախտակ կա: |

**<u>There are</u> (Կան)**

| | | |
|---|---|---|
| **There are** two students. | → | Երկու աշակերտ կա: |
| **There are** two computers. | → | Երկու հատ համակարգիչ մեքենա կա: |
| **There are** desks. | → | Գրասեղաններ կան: |

# Demonstratives

## *ՑՈՒՑԱԿԱՆՆԵՐ*

## (This, That, These, Those)

*Սա Դա  Սրանք  Նրանք, Դրանք*

Ցուցականները ցույց են տալիս, թէ գոյական անունը, որի մասին խոսվում է եզակի է թե հոգնակի:Նրանք նաև ցույց են տալիս տվյալ գոյականի դիրքը խոսողի նկատմամբ(հեռու կամ մոտիկ): Ցուցականները օգտագործվում են թե ցուցական դերանուններ եւ թե ցուցական ածականներ:Ցուցական ածականներ հաջորդվում են գոյական անուններով:

⚐ Հայերենում նույնպես գոյություն ունեն նույն ձևերը:

| | **Near** (Մոտիկ) | **Far** (Հեռու) |
|---|---|---|
| **Singular** ( Եզակի ) | **this** | **that** |
| | Սա | Դա , Նա |
| **Plural** (Հոգնակի) | **these** | **those** |
| | Սրանք | Նրանք , Դրանք |

## **Examples** (Օրինակներ)

### Demonstrative Adjectives
*Ցուցական Ածականներ*

This dog is little.
Այս շունը փոքր է:



These dogs are little.
Այս շները փոքր են:



That dog is big.
Այդ շունը մեծ է:





Those dogs are big.
Այդ շները մեծ են:





### Demonstrative Pronouns
*Ցուցական Դերանուններ*

This is a little dog.
Սա փոքր շուն է:



These are little dogs.
Սրանք փոքր շներ են:



That is a big dog.
Դա մեծ շուն է:





Those are big dogs.
Դրանք մեծ շներ են:





# Possessive Adjectives and
*Ստացական Ածականներ և*
# Possessive Pronouns
*Ստացական Դերանուններ*

Ստացական ածականները և ստացական դերանունները արտահայտում են պատկանելիություն: Ստացական ածականներից հետո գրվում է գոյական անուն, իսկ ստացական դերանուններից հետո որևէ գոյական անուն չի գրվում:

⚐ Հայերենում նույնպես գոյություն ունեն նույն ձևերը:

| Pronouns<br>Դերանուններ | Possessive Adjectives<br>Ստացական Ածականներ | Possessive Pronouns<br>Ստածական Դերանուններ |
|---|---|---|
| **I** | **my** house | **mine** |
| **you** | **your** house | **yours** |
| **he** | **his** house | **his** |
| **she** | **her** house | **hers** |
| **it** | **its** house | -- |
| **we** | **our** house | **ours** |
| **they** | **their** house | **theirs** |

| Possessive Adjectives | | Possessive Pronouns | |
|---|---|---|---|
| **My** house is new. | Իմ տունը նոր է: | The new house **is mine** | Նոր տունը իմն է: |
| **Your** pen is blue. | Քո գրիչը կապույտ է: | The blue pen **is yours**. | Կապույտ գրիչը քոնն է: |
| **His** house is old. | Նրա տունը հին է: | The old house **is his**. | Հին տունը նրանն է: |
| **Our** cat is big. | Մեր կատուն մեծ է: | The big cat **is ours**. | Մեծ կատուն մերն է: |
| **Their** dog is noisy. | Նրանց շունը աղմկոտ է: | The noisy dog **is theirs**. | Աղմկոտ շունը նրանցն է: |

## Possessive Adjectives in English and Armenian
Ստացական Ածականները Անգլերենում և Հայերենում

| | | | |
|---|---|---|---|
| **my** | Իմ | **our** | Մեր |
| **your** | Քո, Ձեր (եզակի-պաշտոնական) | **your** | Ձեր (հոգնակի) |
| **his**<br>**her**<br>**its** | Նրա (արական)<br>Նրա (իգական)<br>Սրա, Դրա (չեզոք) | **their** | Նրանց |

## Possessive Pronouns in English and Armenian
Ստացական Դերանունները Անգլերենում և Հայերենում

| | | | |
|---|---|---|---|
| **mine** | Իմը | **ours** | Մերը |
| **yours** | Քոնը , Ձերը<br>(եզակի-պաշտոնական) | **yours** | Ձերը (հոգնակի) |
| **his**<br>**hers**<br>***its** | Նրանը (արական)<br>Նրանը (իգական)<br>*Սրանը, Դրանը (չեզոք)* | **theirs** | Նրանցը |

***(Ուշադրություն)** : Անգլերենում **its ( Սրանը, Դրանը)** որպես ստացական դերանուն չի օգտագործվում:*

# Simple Present

*Ներկա Ժամանակ*

Բայի ներկա ժամանակը օգտագործվում է սովորական և պարզ գործողության ժամանակ:

⚐ Հայերենում բայը խոնարհվում է ըստ ենթակայի:

## Positive (Դրական Աստիճան)

| | | | |
|---|---|---|---|
| I eat. → | Ես ուտում եմ: | We eat. → | Մենք ուտում ենք: |
| You eat. → | Դու ուտում ես: | You eat. → | Դուք ուտում եք: |
| He eats. →<br>She eats. →<br>It eats. → | Նա ուտում է:<br>Նա ուտում է:<br>Սա ուտում է:<br>Դա ուտում է: | They eat. → | Նրանք ուտում են: |





**Example:** He eats a sandwich.
Նա ուտում է սանդվիչ:

They eat a sandwich.
Նրանք ուտում են սանդվիչ:

# Negative
## *Ժխտական*

*Do* կամ *does*- (ժխտական ձևը՝ do not, does not) օժանդակ բայերը օգտագործվում են որպեսզի ժխտական դարձնեն բայի ներկա ժամանակը:Ավելացրեք not-ը do և does- ից հետո:

⚐ Հայերենում չեմ,չես,չի,չենք,չեք,չեն նախորդում են բային:

| | |
|---|---|
| I **do not** eat. → Ես չեմ ուտում: | We **do not** eat. → Մենք չենք ուտում: |
| You **do not** eat. → Դու չես ուտում: | You **do not** eat. → Դուք չեք ուտում: |
| He **does not** eat. → Նա չի ուտում:<br><br>She **does not** eat. → Նա չի ուտում:<br><br>It **does not** eat. → Սա չի ուտում:<br>Դա չի ուտում: | They **do not** eat. → Նրանք չեն ուտում: |





**Examples:** He **does not** eat apples.
Նա խնձոր չի ուտում:

They **do not** eat apples.
Նրաք խնձոր չեն ուտում:

## Questions

*(Հարցական)*

Որպեսզի բայի ներկա ժամանակը հարցական դարձնել պիտի օգտվել օժանդակ բայերից,որոնք են՝ do կամ does:Պետք է "do" կամ "does"-ը տեղադրել նախադասության սկիզբում:Նախադասությունը սկսեք մեծատառով և ավելացրեք հարցական նշանը ( ?) նախադասության վերջում:

Հայերենում,ի տարբերության անգլերենի,հարցական նախադասության կազմը չի փոխվում,ավելանում է միայն հարցական նշանը " ՞ " հարցում արտահայտող բառի վրա:

He eats a sandwich. ____ he eat a sandwich? **Does** he eat a sandwich?

⇧ **Does**





**Does** he eat a sandwich?
Նա սանդվիչ է ուտու՞մ:

→ Yes, he does. Այո,նա սանդվիչ է ուտում:

→ No, he doesn't. Ոչ,նա սանդվիչ չի ուտում:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Do** I eat? | → | Ես ուտու՞մ եմ: | **Do** we eat? | → | Մենք ուտու՞մ ենք: |
| **Do** you eat? | → | Դու ուտու՞մ ես: | **Do** you eat? | → | Դուք ուտու՞մ եք: |
| **Does** he eat?<br>**Does** she eat?<br>**Does** it eat? | →<br>→<br>→ | Նա ուտու՞մ է:<br>Նա ուտու՞մ է:<br>Սա ուտու՞մ է:<br>Դա ուտու՞մ է: | **Do** they eat? | → | Նրանք ուտու՞մ են: |

# Simple Present

*Ներկա Ժամանակ*

## Positive (Դրական)

| | | | |
|---|---|---|---|
| I eat. → | Ես ուտում եմ: | We eat. → | Մենք ուտում ենք: |
| You eat. → | Դու ուտում ես: | You eat. → | Դուք ուտում եք: |
| He eats. → | Նա ուտում է: | They eat. → | Նրանք ուտում են: |
| She eats. → | Նա ուտում է: | | |
| It eats. → | Սա ուտում է: | | |
| | Դա ուտում է: | | |

## Negative (Ժխտական)

| | | | |
|---|---|---|---|
| I **do not** eat. → | Ես չեմ ուտում: | We **do not** eat. → | Մենք չենք ուտում: |
| You **do not** eat. → | Դու չես ուտում: | You **do not** eat. → | Դուք չեք ուտում: |
| He **does not** eat. → | Նա չի ուտում: | They **do not** eat. → | Նրանք չեն ուտում: |
| She **does not** eat. → | Նա չի ուտում: | | |
| It **does not** eat. → | Սա չի ուտում: | | |
| | Դա չի ուտում: | | |

## Questions (Հարցական)

| | | | |
|---|---|---|---|
| **Do** I eat? → | Ես ուտու՞մ եմ: | **Do** we eat? → | Մենք ուտու՞մ ենք: |
| **Do** you eat? → | Դու ուտու՞մ ես: | **Do** you eat? → | Դուք ուտու՞մ եք: |
| **Does** he eat? → | Նա ուտու՞մ է: | **Do** they eat? → | Նրանք ուտու՞մ են: |
| **Does** she eat? → | Նա ուտու՞մ է: | | |
| **Does** it eat? → | Սա ուտու՞մ է: | | |
| | Դա ուտու՞մ է: | | |

# Present Continuous

*Ներկա Ժամանակի Շարունակական Եղանակը*

Ներկա ժամանակի շարունակական կերպը ներկայացնում է այն գործողությունը, որը կատարվում է խոսելու պահին: Be(am,is,are) (լինել) բայը օգտագործվում են ներկա ժամանակի շարունակական եղանակը կազմելու համար: Օգտագործվում են Be (am,is,are)(Լինել) բայը հարցական նախադասության պատրաստման համար:

⚐ Հայերենում ներկա ժամանակի շարունակական եղանակի և բայի ներկա ժամանակի միջև տարբերություն չկա, եթե չենք նշում գործողությունը կատարվելու պահը ( հիմա, հենց հիմա ):

## Positive

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I **am** work**ing**. | → | Ես հիմա աշխատում եմ: | We **are** work**ing**. | → | Մենք հիմա աշխատում ենք: |
| You **are** work**ing**. | → | Դու հիմա աշխատում ես: | You **are** work**ing**. | → | Դուք հիմա աշխատում եք: |
| He **is** work**ing**.<br><br>She **is** work**ing**.<br><br>It **is** work**ing**. | →<br><br>→<br><br>→ | Նա հիմա աշխատում է:<br><br>Նա հիմա աշխատում է:<br><br>Սա հիմա աշխատում է:<br><br>Դա հիմա աշխատում է՞: | They **are** work**ing**. | → | Նրանք հիմա աշխատում են: |





**Examples:** She **is** work**ing** right now.
Նա հենց հիմա աշխատում է:

They **are** work**ing** right now.
Նրաք հենց հիմա աշխատում են:

# Negative

## *Ժխտական*

Be (am,is,are) (լինել) բայը և not-ը օգտագործվում են ժխտական նախադասություններ կազմելու համար:

⚐ Հայերենում չեմ,չես,չի,չենք,չեք,չեն նախորդում են բային:

| | |
|---|---|
| I **am not** working. ⟶ Ես հիմա չեմ աշխատում: | We **are not** working. ⟶ Մենք հիմա չենք աշխատում: |
| You **are not** working. ⟶ Դու հիմա չես աշխատում: | You **are not** working. ⟶ Դուք հիմա չեք աշխատում: |
| He **is not** working. ⟶ Նա հիմա չի աշխատում:<br>She **is not** working. ⟶ Նա հիմա չի աշխատում:<br>It **is not** working. ⟶ Սա հիմա չի աշխատում: Դա հիմա չի աշխատում: | They **are not** working. ⟶ Նրանք հիմա չեն աշխատում: |







**Examples:** She **is not** working right now.
Նա հենց հիմա չի աշխատում:

They **are not** working right now.
Նրաք հենց հիմա չեն աշխատում:

# Questions

*(Հարցական)*

Որպեսի ներկա ժամանակի շարունակական կերպը հարցական դարձնել պետք է be(am,is,are) ( լինել) բայը տեղադրել նախադասության սկիզբում:Նախադասությունը սկսեք մեծատառով և ավելացրեք " ? " նշանը նախադասության վերջում:

⚐ Հայերենում, ի տարբերություն անգլերենի, հարցական նախադասության կազմը չի փոխվում, ավելանում է միայն հարցական նշանը " ՞ " հարցում արտահայտող բառի վրա:

She **is working** now. She **is working** now. **Is** she **working** now?





**Is** she working right now?
Նա հենց հիմա աշխատու՞մ է:

→ Yes, she is. Այո, նա հենց հիմա աշխատում է:

→ No, she is not. Ոչ, նա հենց հիմա չի աշխատում:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Am** I working? | → | Ես հիմա աշխատու՞մ եմ: | **Are** we working? | → | Մենք հիմա աշխատու՞մ ենք: |
| **Are** you working? | → | Դու հիմա աշխատու՞մ ես: | **Are** you working? | → | Դուք հիմա աշխատու՞մ եք: |
| **Is** he working? | → | Նա հիմա աշխատու՞մ է: | **Are** they working? | → | Նրանք հիմա աշխատու՞մ են: |
| **Is** she working? | → | Նա հիմա աշխատու՞մ է: | | | |
| **Is** it working? | → | Սա հիմա աշխատու՞մ է: | | | |

# Present Continuous

## **Positive** (Դրական)

| | | | |
|---|---|---|---|
| I **am** work**ing**. → | Ես հիմա աշխատում եմ: | We **are** work**ing**. → | Մենք հիմա աշխատում ենք: |
| You **are** work**ing**. → | Դու հիմա աշխատում ես: | You **are** work**ing**. → | Դուք հիմա աշխատում եք: |
| He **is** work**ing**. → | Նա հիմա աշխատում է: | They **are** work**ing**. → | Նրանք հիմա աշխատում են: |
| She **is** work**ing**. → | Նա հիմա աշխատում է: | | |
| It **is** work**ing**. → | Սա հիմա աշխատում է:<br>Դա հիմա աշխատում է: | | |

## **Negative** (Ժխտական)

| | | | |
|---|---|---|---|
| I **am not** working. → | Ես հիմա չեմ աշխատում: | We **are not** working. → | Մենք հիմա չենք աշխատում: |
| You **are not** working. → | Դու հիմա չես աշխատում: | You **are not** working. → | Դուք հիմա չեք աշխատում: |
| He **is not** working. → | Նա հիմա չի աշխատում: | They **are not** working. → | Նրանք հիմա չեն աշխատում: |
| She **is not** working. → | Նա հիմա չի աշխատում: | | |
| It **is not** working. → | Սա հիմա չի աշխատում:<br>Դա հիմա չի աշխատում: | | |

## **Questions** (Հարցական)

| | | | |
|---|---|---|---|
| **Am** I working? → | Ես հիմա աշխատու՞մ եմ: | **Are** we working? → | Մենք հիմա աշխատու՞մ ենք: |
| **Are** you working? → | Դու հիմա աշխատու՞մ ես: | **Are** you working? → | Դուք հիմա աշխատու՞մ եք: |
| **Is** he working? → | Նա հիմա աշխատու՞մ է: | **Are** they working? → | Նրանք հիմա աշխատու՞մ են: |
| **Is** she working? → | Նա հիմա աշխատու՞մ է: | | |
| **Is** it working? → | Սա հիմա աշխատու՞մ է: | | |

# Prepositions

*Նախդիրներ*

Նախդիրները ցույց են տալիս թե որտեղ Եւ երբ այն ինչ որեւ բան գտնվում կամ պատահում է:Նախդիրները թե գոյական անունները եւ թե դերանունները միացնում են նախադասության ուրիշ անդամներին:

⚐ Հայերենում գոյություն ունեն նույն ձեւերը ապա որոշ նախդիրները ավելացվում են բառավերջում:

| | |
|---|---|
| **from** | <br>I am **from** Armenia.<br>Ես Հայաստան**ից** եմ: |
| **to** | <br>I go **to** work.<br>Ես գնում եմ աշխատանք**ի**: |
| **at** | <br>I go to school **at** 6:00 p.m.<br>Ես ժամը 6**-ին** գնում եմ դպրոց: |
| **from...to** | <br>I go to school **from** 6:00 p.m. **to** 9:30 p.m.<br>Երեկոյան ժամը 6**-ից** **մինչև** 9:30 դպրոցում եմ: |

| | |
|---|---|
| **in** | <br>The ball is **in** the box.<br>Գնդակը տուփի **մեջ** է: |
| **on** | <br>The ball is **on** the box.<br>Գնդակը տուփի **վրա** է: |
| **next to** | <br>The ball is **next to** the box.<br>Գնդակը տուփի **կողքին** է: |
| **between** | <br>The ball is **between** the boxes.<br>Գնդակը տուփերի **միջև** է: |
| **under** | <br>The ball is **under** the box.<br>Գնդակը տուփի **տակն** է: |

# Imperatives

*Հրամայական*

Հրամայական նախադասությունները հրամաններ են։
Դու և Դուք դերանունները ենթադրված են հրամայական նախադասություններում։

⚐ Հայերենում նույնպես գոյություն ունեն նույն ձևերը։

Listen.
**Լսի՛ր։**



Point.
**Նշի՛ր**
**Ցու՛յց տուր։**



Read.
**Կարդա՛։**



Open your book.
**Գիրքդ բացի՛ր։**



Write.
**Գրի՛ր։**



Repeat.
**Կրկնի՛ր։**



No talking.
**Մի՛ խոսիր։**



Practice with your partner.




**Դասդ փորձի՛ր դասարանակիցիդ հետ։**

Raise your hand.
**Ձեռքդ բարձրացրու՛։**



No cheating.
**Մի՛ արտագրիր։**



# Question Words

*Հարցական Բառեր*

Հարցական բառերը օգտագործվում են հարցեր տալու համար:

Հայերենում նույնպես գոյություն ունեն նույն ձևերը:

| | | |
|---|---|---|
|  | **Ո՞վ-** հարց է տալիս անձի մասին<br><br>**Who** is he? Ո՞վ է նա:<br>He is my teacher.Նա իմ դասատուն է: | **Ո՞վ** |
|  | **Ի՞նչ-** հարց է տալիս առարկայի մասին:<br><br>**What** is it? Ի՞նչ է սա:<br>It is a book. Սա գիրք է: | **Ի՞նչ** |
|  | **Ե՞րբ-** հարց է տալիս ժամանակի մասին:<br><br>**When** is your English class?<br>Ե՞րբ է քո անգլերենի դասը:<br>It is at 6:00 p.m.<br>Ժամը 6-ին է: | **Ե՞րբ** |
|  | **Ու՞ր-** հարց է տալիս տեղի մասին:<br><br>**Where** do you live? Որտե՞ղ ես ապրում:<br>I live in Glendale.Ես ապրում եմ Գլենդելում: | **Ու՞ր**<br>**Որտե՞ղ** |
|  | **Որքա՞ն,Ինչքա՞ն-** հարց է տալիս ոչ հաշվողական գոյականների մասին:<br><br>**How much** rice do you want?<br>Ինչքա՞ն բրինձ կցանկանաս:<br>I want a bowl of rice.<br>Ես ցանկանում եմ մի ափսե բրինձ: | **Որքա՞ն**<br>**Ինչքա՞ն** |
|  | **Քանի՞ հատ-** հարց է տալիս հաշվողական գոյականների մասին:<br><br>**How many** eggs do you want?<br>Քանի՞ հատ ձու կցանկանաս:<br>I want three eggs.<br>Ես ցանկանում եմ երեք հատ ձու: | **Որքա՞ն**<br>**Ինչքա՞ն**<br>**Քանի՞ հատ** |

# Be (was, were)

Was և Were-ը be (am,is,are) բայի անցյալ ժամանակի տարբեր ձևերն են: Be(Լինել) բայի ներկա <u>եւ</u> անցյալ ժամանակի ձևերը օգտագործվում են նույն նպատակների համար:

⚐ <u>Հայերենում</u> նույնպես գոյություն ունեն նույն ձևերը:

(Երեկ)Yesterday →  ← Today (Այսօր)

| <u>Simple Past- Yesterday</u><br>Անցյալ Ժամանակ | | <u>Simple Present - Today</u><br>Ներկա Ժամանակ |
|---|---|---|
| **Was** | ← | Am |
| **Was** | ← | Is |
| **Were** | ← | Are |

**Examples**:

| <u>Simple Past</u><br>Անցյալ Ժամանակ | <u>Simple Present</u><br>Ներկա Ժամանակ |
|---|---|
| I **was** sick yesterday.<br>Ես երեկ հիվանդ էի: | I am sick today.<br>Ես այսօր հիվանդ եմ: |
| It **was** hot yesterday.<br>Երեկ շոգ էր: | It is hot today.<br>Այսօր շոգ է: |
| We **were** in class yesterday.<br>Երեկ դասարանում էինք: | We are in class today.<br>Այսօր դասարանում ենք: |
| You **were** a student last year.<br>Դու անցյալ տարի աշակերտ էիր: | You are a student this year.<br>Դու այս տարի աշակերտ ես: |

# Parts of Speech

*Խոսքի Մասեր*

Խոսքի մասերը քերականական անդամներ են որոնք օգտագործվում են նախադասություն կազմելու համար: Խոսքի մասերը ունեն քերականական նպատակներ:

Հայերենում գոյություն ունեն նույն ձևերը:

<u>I</u> <u>eat</u> <u>green</u> <u>grapes</u>.

pronoun (դերանուն) | verb ( բայ) | adjective (ածական) | noun (գոյական)

1. <u>Noun (Գոյական):</u> Գոյականները՝ իրերի, անձերի, տեղերի, և վերացական գոյականների անուններն են:

**Examples:** People (անձեր) - *brother, teacher, man, Susan*
Places (տեղ- վայր) - *bank, city, classroom, store*
Things (իր-առարկա-բան) - *book, pencil, shirt, door*
Ideas (վերացական գոյականներ) - *love, health, religion, freedom*

2. <u>Pronoun (Դերանուն):</u> Այն բառն է, որը գրվում է գոյական անունի փոխարեն:

**Examples:** *Susan* lives in Glendale. *She* is American.

3. <u>Adjective (Ածական)</u>: Այն բառն է, որը տեղեկություն է տալիս գոյականի կամ դերանունի մասին:

**Examples:** He is a *good* teacher.

4. <u>Verb (Բայ)</u>: Այն բառն է, որը ցույց է տալիս գործողություն կամ միացնում է մի ուրիշ բառ նախադասության ենթակային:

**Examples:** I *eat* lunch. The teacher *is* hungry.